ՔՈՆԱՅԻ 1330 Թ. ԺՈՂՈՎԸ ԵՎ ՄԻԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԺԳ դարի կեսերից հայ հասարակության ներսում խմորվում էին նոր երևույթներ ու իրադարձություններ, որոնք կապված էին «մուրացիկ» միաբանությունների՝ ֆրանցիսկյանների և դոմինիկյանների քարոզչական գործունեության հետ, որի հետևանքով նոր հատկանիշներ են ձեռք բերում հայ – եվրոպական փոխառնչությունները: Բանն այն է, որ Կիլիկյան Հայաստանում և Մեծ Հայքում հաստատված քարոզիչները արդեն չէին բավարարվում միայն հայերին ծանոթացնելով հռոմեա – կաթոլիկական դավանանքին, այլ հիմնում էին իրենց կենտրոնները և ծավալում գիտամշակութային լայն գործունեություն: Կաթոլիկություն տարածելու համար բավարար չէին միայն բանավոր քարոզները, այլ անհրաժեշտ էր ստեղծել ուսումնագիտական կենտրոններ, որոնք ի վիճակի լինեին լուծելու մի շարք խնդիրներ.

ա) Այդ կենտրոնները պետք է պատրաստեին հայոց լեզվին ու մշակույթին քիչ թե շատ ծանոթ քարոզիչներ, ուստի անհրաժեշտ էր ունենալ այդ պահանջները բավարարող դպրոցներ:

բ) Նրանց գործունեության կարևոր ոլորտը պետք է դառնար նաև թարգմանական աշխատանքներ կատարելը, որպեսզի հայ հասարակությունը առավել մոտիկից ծանոթանար նոր գաղափարախոսության հետ: Ֆրանցիսկյանների և դոմինիկյանների մշակութային գործունեությանը կանդրադառնանք այլ առիթներով, իսկ սույն հոդվածի շրջանակներում կփորձենք պարզաբանել.

ա) Քոնայի ժողովը, մասնակիցների կազմը, միարարական շարժման սկզբնավորումը և կառուցվածքը:

բ) Հովհ. Քոնեցու «Շրջաբերական թուղթը» և նրա նշանակությունը հայ հասարակական – քաղաքական կյանքում:

Հայ հասարակության մեջ սկզբում քարոզչական լայն գործունեություն էին ծավալել ֆրանցիսկյանները, սակայն նրանց վիճակված չէր պապական-ության հովանու ներքո երկար աշխատել, քանզի 1318 թ. ապրիլի 1-ին Հովհաննես ԻԲ պապը (1316-1334) հրատարակեց «Redemtor noster» բուլլան, որով ֆրանցիսկյան և դոմինիկյան միաբանությունների քարոզչական գործունեության շրջանների նոր բաժանում կատարվեց[1]: Դոմինիկյան միաբանությունը ստացավ նաև նոր հիմնադրված Սուլթանիա արքեպիսկոպոսությունը

[1] После Марко Поло, Путешествия западных чужеземцев в страны трех Индий. Перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я. М. Света, Москва, 1968, с. 98.

(առաջին արքեպիսկոպոս նշանակվեց Ֆրանկո Պերուջացին), որն իր շրջանակներում ուներ վեց թեմ, այդ թվում Թավրիզը, Մարաղան, Դեհխարկանը: Այս բաժանումից հետո Արևելքում լայն գործունեություն են ծավալում դոմինիկյան քարոզիչները: Այս բաժանումը էական ազդեցություն չունեցավ հայ իրականության մեջ, քանզի կաթոլիկական գաղափարախոսությանը հակված հայ գործիչները նույն մտայնությամբ շարունակեցին իրենց գործունեությունը դոմինիկյանների հետ:

Քանի որ Քռնայի ժողովի հրավիրումը և «Շրջաբերական թղթի» երևան գալը կապված էին Հովի. Քռնեցի վարդապետի գործունեության հետ, ապա աղբյուրների տվյալների համադրմամբ կփորձենք պարզաբանել առավել կարևոր իրադարձությունների հետ աղերսվող որոշ խնդիրներ:

1328թ. Գլաձորի համալսարանի ռաբունապետ Եսայի Նչեցին Մարաղա է ուղարկում իր աշակերտներից մեկին Հովհաննես Քռնեցուն: Այս իրողությունը հայագիտության մեջ տարաբնույթ մեկնաբանումների և եզրակացությունների տեղիք է տվել[2]: Բանն այն է, որ այս տեղեկությունը Մխիթար Ապարանեցին հաղորդում է հետևյալ ձևով. «Քանզի մեծ վարդապետն Հայոց Եսայի, որ էր ի Գայլիձորն, որ տուեալ է գաւազան իշխանութեան վարդապետելոյ զմ. եւ Կ. է. անձանց, էր ջաբրոնաւոր իւրով ամենայն ընտրելօվքն ըստ սովորութեան Սրսա միաբանողացն: Վասն որոյ յորժամ լուաւ եթէ սուրբ եպիսկոպոսն տէր Բարդօլիմէոս ի Ֆռանկաց եկեալ է ի Մարաղա քաղաք ի քարոզութիւն, առաքեաց զոմն ընտիր աշակերտն իւր. այսինքն զՅոհան վարդապետն, առ ի բերել զնա առ ինքն զի ամենեւին ուսուցցէ զամենեսեան ըստ ձեւո սուրբ եկեղեցու»[3]:

Նախ «Սրսա միաբանողաց» դավանաբանական հասկացության մասին: 1307 թ. Սսի ժողովի ընդունած Սահմանադրության շրջանակներում ձևավորված այս հասկացությամբ փորձում էին բնութագրել հայոց եկեղեցին անկախ այն բանից, թե տվյալ եկեղեցական վիճակը ընդունե՞լ էր ժողովի կանոնները, թե՞ ոչ: Փաստորեն հաշվի էին առնում այն հանգամանքը, որ ժողովի ընդունած Սահմանադրության տակ ստորագրել էր հայոց կաթողիկոսը, ըստ այդմ էլ նրան տալիս էին համահայկական բնույթ: Հասկացությունը շրջանառության մեջ դրվեց հայ հասարակական – քաղաքական միջավայրում ձևավորված գաղափարական հոսանքներից մեկին բնորոշելու համար:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ հատվածի վերջին մասին, ապա կասկածանքի տեղիք չի տալիս, որ Հովի. Քռնեցին Մարաղա է մեկնել Եսայի Նչեցու հանձնարարականով: Զարմանալի ոչինչ չկա, եթե կաթոլիկ քարոզիչների դեմ ծավալած պայքարի ակնառու առաջնորդներից մեկը նրանց

---

[2] Յովհաննէս Քռնեցի Յաղագս Քերականին, Բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Խաչիկյանը, Երևան, 1977, էջ 23:

[3] M. A. Oudenrijn, Linquae Heicanae scriptores Ordinis Praedicatorum conqreqationis Fratrum Unitorum, Bern, 1960, p. 216.

գործունեության մասին ճշգրիտ տեղեկություններ ստանալու համար իր աշակերտներից մեկին ուղարկեր Մարաղա: Ինչ վերաբերում է Բարթուղիմեոս Մարաղացու Գլաձոր հրավիրելու խնդրին, թերևս նման փորձեր եղել են, բայց ոչ կաթոլիկություն քարոզելու, այլ ուսուցչությամբ զբաղվելու կամ հավատքի հարցերի շուրջ վիճաբանելու համար:

Հետաքրքիր է, որ «Շրջաբերական թղթում» Հովհ. Քռնեցին չի նշում, որ ինքը Մարաղա է մեկնել Եսայի Նչեցու հանձնարարությամբ. «Արդ պատահեցաւ ինձ երթալ ի քաղաքն Մարաղայ...»[4]: Այստեղից կարելի է եզրակացնել.

ա) Մխիթար Ապարանեցու հավելումը նպատակ է հետապնդել կարևոր իրադարձությունների շղթայում ներկայացնել նաև ժամանակի նշանավոր գործիչ Եսայի Նչեցուն:

բ) Որպեսզի հիմնավորի իր գործունեության խորհրդավորությունը Հովհ. Քռնեցին Մարաղա մեկնելը բացատրում է «պատահեցաւ» անորոշ ձևով:

Այնուհետև. «Այլ Յոհան վարդապետն, յամեալ անդ առ նա ամ մի եւ կէս, ուսաւ ի նմանէ եւս բազում վարդապետութիւն եւ ապա առեալ տարաւ զնա ի գաւառն իւր եւ ի գեղն իւր Քռնա, զի անդի տարածեսցի ընդ ամենայն երկիր ուսումն ճշմարտութեան...»[5]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի կրոնական կենցաղավարության պայմաններում մի դավանանքից մյուսին անցնելը հաճախ կապված էր նաև պատահական, մասնավորապես արտաքին ազդակների հետ: Այս դեպքում չի բացառվում նաև նման ազդակների առկայությունը Հովհ. Քռնեցու շրջապատում, մասնավորապես եթե հաշվի առնենք հասարակական – քաղաքական և հոգևոր – մշակութային այն լարված միջավայրը, որտեղ ապրում և աշխատում էր նշանավոր վարդապետը:

Մեկ և կես տարի մնալով Մարաղայում Հովհ. Քռնեցին Բարթուղիմեոս Մարաղացու հետ վերադառնում է և հաստատվում իր հայրենի Քռնա գյուղում: Այստեղ գյուղի տանուտեր պարոն Գորգի ջանքերով (Գորգը Հովհ. Քռնեցու մորեղբայրն էր) կառուցում են եկեղեցի. «...ի գեղս Քռնայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որ նոր շինեցաւ զօրութեամբ կուսին Հ. (70) աւր...»[6]: Դժվար է պատկերացնել, որ 70 օրում կառուցվել է նոր եկեղեցի: Հավանաբար խոսքը վերաբերում է օժանդակ շինություններին, քանզի այն պետք է դառնար մշակութային և քարոզչական կենտրոն. «...եւ սոքա երեքեան՝ Յոհան վարդապետն եւ պարոն Գորգն եւ տիկին Ելթիկն ինքնայօժար կամօք

---

[4] Կղ. Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. I, Հռոմ, 1650, էջ 518:
[5] M. Oudenrijn, p. 216.
[6] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. կազմեց Լ.Խաչիկյան, Երևան, 1950, էջ 216:

նուիրեցին զվանքս կարգին քարոզողաց սրբոյն Դօմինիկոսի տուրք յաւիտենական...»[7]:

Քռնայի դպրոցում ծավալած մշակութային գործունեությունից բացի Հովի. Քռնեցին և նրա կողմնակիցները ձեռնամուխ են լինում նաև հայ – հռոմեական եկեղեցիների միավորման ծրագրի մշակմանը: Այս նպատակով Հովի. Քռնեցին իր շուրջն է համախմբում Գլաձորի համալսարանում իր հետ ուսանած մի շարք վարդապետների:

Այս հանգամանքը իրավունք է տալիս եզրակացնելու.

ա) Մինչև ծավալուն քարոզչական գործունեության անցնելը «կարգին միաբանողաց» անդամագրվողները առավելապես զբաղվում էին գիտաթարգմանչական գործունեությամբ, ուստի անհրաժեշտ էին գիտուն վարդապետներ:

բ) Եկեղեցիների միավորման ծրագիրը կենսագործելիս պետք է կարողանային հիմնավորել հայոց եկեղեցում կատարվող դավանաբանական վերափոխումների կարևորությունը: Այս բարդ ու դժվարին խնդիրը պետք է լուծեին դավանաբանական նորածևություններին խորագիտակ վարդապետները:

Հովի. Քռնեցու ջանքերով 1330 թ. Քռնայում հրավիրվում է վարդապետների ժողով: Լ. Խաչիկյանը, հենվելով Մաշտոցի անվան Մատենադարան N N 2180 և 1301 գրչագրերում պահպանված անվանացանկերի վրա, փորձել է ճշգրտել ժողովի մասնակիցների կազմը. «Մարգարէ վարդապետն ի գեղջէն Օձոպայ, Յակոբ վարդապետն ի գեղջէն Քռնայ, Հայրապետ վարդապետն յԵօթնաղբիւր գեղջէ, Յովհաննէս վարդապետն ի Ծուան գեղջէ, Սիմէոն վարդապետն ի Բասին գեղջէ (տրբրկ. ի Բասեն գաւառէ), Ներսէս վարդապետն ի Թարսոն գաւառէ (տրբրկ. ի գաւառէն Տարօնոյ), Առաքել և Լալ (տրբրկ. Իսրաէլ) վարդապետք յԱրտազուն գաւառէ (տրբրկ. ի գաւառէն Արտազու), Գրիգոր վարդապետն յԱպարակունիս գեղջէ, Կոստանդին և Յովհաննէս վարդապետք ի Կաղզվանոյ գաւառէ (տրբրկ. ի յաշխարհէն Կիլիկիոյ), Սիմէոն վարդապետն ի Խաչին (տրբրկ. Խաչէն) գաւառէ. եւ այլք բազումք, որոց անունանք գրեալ են ի գիրս կենաց»[8]:

Այս տարընթերցումներից պարզեցինք Ներսես վարդապետի հետ կապված հանգամանքները. «Ես Ներսէս անուամբ վարդապետ, բայց գործով վերջացեալ հող և մոխիր վարդապետաց, որդի Վահրամա, յաշխարհէն Տարօնու ի գաւառէն Սասնու, ի վանացն Ղազարու, ի գեղջէն, որ կոչի Կոռ...»[9]: Այն, որ հիշատակվող Ներսեսը Քռնայի ժողովին մասնակցած Ներսես վարդապետն, է հաստատում է վերոնշյալ հիշատակարանի հաջորդ հատվածը. «...և ուղղեալ գնացի ի Քռնայ, առ սուրբ եպիսկոպոսն տէր Բարդողիմոս և առ

---

[7] Նույն տեղում, էջ 338:
[8] Հովի. Քռնեցի, էջ 24:
[9] Հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 245:

վարդապետքն Հայոց, որ առ նմա կային յայնժամ. և Մարգարէ՝ վարդապետն չէր անդ, որ կազմող էր գրոց, այլ գնացեալ էր ի ճահուկ...»[10]:

Ինչ վերաբերում է Արտազը ներկայացնող Լալ վարդապետին, ապա նա Ծորօրդի վանքի նշանավոր վարդապետ Իսրայելն է:

Ժողովի ընդունած որոշումները մեզ չեն հասել: Այդ մասին որոշ տեղեկություններ ստանում ենք Հովհ. Քռնեցու «Շրջաբերական թղթից», «Թուղտ Յոհաննու վարդապետին Քռնեցւոյ առ միաբանեալ եղբարսն Հայոց»[11], որի գրության ճիշտ ժամանակը մնում է վիճահարույց: Համենայնդեպս, թղթում շարադրված որոշ տեղեկություններ, մասնավորապես Բարթուղիմեոս Մարաղացու մահը (1333) և Հովհ. Քռնեցու Ավինյոն մեկնելը (1333), թույլ են տալիս եզրակացնելու, որ այն շարադրվել է 1333 թ. հետո:

Հովհ. Քռնեցին և նրա համախոհները իրենց գործունեությունը ներկայացնում էին որպես հայոց եկեղեցու «մոլորությունները» հաղթահարելու գործընթաց. «Եւ ի քարոզողացս այսոցիկ առաքեցան ոմանք ի գերագոյն պապէն Յոհաննու որորդէ, հանդերձ հայրապետական թղթով առ տէր Կոստանդին Կեսարացի կաթողիկոսն և առ Օշին արքայն Հայոց: Վասն որոյ նոյն կաթողիկոսն գումարելով զամենայն եպիսկոպոսունս և զեկեղեցականս, որք էին բռամբ իւրով, ի միասին ընդ նմին Օշին արքային Հայոց և իշխանաց թագաւորութեան իւրոյ արար ժողով յորում Հայք ի յաւարտելն միաբանութեան ընդ սուրբ եկեղեցւոյն Հռովմայ: Խոստացան զինազանդութիւն Հռովմայ Քահանայապետին...»[12]:

Պատահական չէր, որ Հովհ. Քռնեցին աշխատում էր.

ա) Միաբանող եղբայրներին ցույց տալ, որ իրենք կենսագործում են այն ծրագրերը, որոնք ընդունվել էին անցյալում:

բ) Երկու եկեղեցիների միավորման կողմնակիցների թվում նշելով Օշին թագավորին, Կոստանդին Կեսարացի կաթողիկոսին և Հայաստանի նշանավոր եկեղեցաքաղաքական գործիչներ՝ Զաքարիա արքեպիսկոպոս և Հովհաննես վարդապետ Ծորօրդեցիների անունները, աշխատում էր թույլատրելի և օրինական դարձնել իրենց գործունեությունը:

Քանի որ «Շրջաբերական թղթում» որոշ երևույթներ ու իրադարձություններ Հովհ. Քռնեցին անձնավորել է, ապա կփորձենք վերլուծել դրանցից մի քանիսը: Այսպես. «Բայց ի միտ ածելով, թէ պարտական էի ոչ միայն անձին իմոյ փրկութեան, այլ ևս ամենեցուն մերայնոց. ցաւէր յիս արդեօք ոգի իմ»[13]: Հովհ. Քռնեցին աշխատում էր իր գործունեությունը ներկայացնել ոչ միայն հոգուտ անձնական, այլև հասարակական փրկության, որը պետք է իրագործվեր

---

[10] Նույն տեղում, էջ 246:
[11] Կղ. Գալանոս, էջ 513-522:
[12] Նույն տեղում, էջ 517:
[13] Նույն տեղում, էջ 519:

կաթոլիկ դավանանքի շրջանակներում ձևավորված մշակութային արժեքների յուրացման ճանապարհով: Իր գործունեության ելակետը և արդարացումը Հովի. Քոնեցին շաղկապում էր հոգու փրկության կնճռոտ խնդրի հետ. «Ուստի ի յաւարտելն ամին սկսաք ամենեքեանս քարոզել ի բոլոր Հայս զմիաբանութիւն ընդ եկեղեցւոյն Հռովմայ հարկաւոր իսկ գոլ առ ի փրկութիւն հոգւոյ...»[14]: Այս հատվածից պարզ երևում է, որ միարարական շարժման կառուցվածքային խնդիրը Քոնայի ժողովը չլուծեց: Ժողովի մասնակիցները հավանաբար նման խնդիր իրենց առջև չէին դրել: Դա այնքան էլ հեշտ չէր, քանզի բավարար չէր որպես սկզբունք վերցնել եկեղեցու թեմական կառուցվածքը թեկուզ այն պարզ պատճառով, որ կազմակերպման շրջանակներում ամենից առաջ հարկավոր էր իրագործել եկեղեցիների միավորման ծրագիրը: Շարժման կազմակերպման հետ առնչվող մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությունը ստիպում է Հովի. Քոնեցուն մեկնել պապական արքունիք:

Միաբանությունը որպես այդպիսին հաստատվում է Հովի. Քոնեցու վերադառնալուց հետո. «Վասն որոյ դարձայ ի յարևելս և հանդերձ ընկերակցօք իմովք ուխտ արարաք կեալ կրօնաւորապես ըստ կանոնաց սրբոյն Օգոստինոսի և ըստ կացուցմանց սրբոյն Դոմինիկոսի, զոր և համարեցաք ունել որպէս հայր, հիմն, և սկիզբն կարգին մերոց: Եւ ընդ առնելն ուխտադրութեանս ի ձեռն տեառն Յոհաննու ազգաւ լատին, որ առաքեալ էր ի Հռովմայ պապէն հանդերձ լիագոյն իշխանութեամբ եպիսկոպոս Թփլիզ քաղաքին, եւ ընդորեցայ գաւառական առաջնորդ մերոյ կարգիս միաբանողաց ըստ իշխանութեան ի նոյն եպիսկոպոսէ աւանդեալ մեզ...»[15]:

Այսպես, հայ իրականության մեջ ստեղծվում է նոր միաբանություն, որը ստանում է «Հայ միաբանող եղբայրներ» անվանումը: Նորաստեղծ միաբանությունը, չնայած այն հանգամանքին, որ առաջնորդվում էր դոմինիկյան կանոններով, չպետք է նույնացնել նրա հետ. «Ս.Դոմինիկոսի միաբանութեան մէկ ճշգրիտ տիպարն էր, ի բաց առեալ մշտնջենաւոր պահեցողութիւնը եւ կամաւոր աղքատութիւնը: Իրենց ուխտին ձեւին մէջ կաւելցնէին նաեւ Հռոմայ եկեղեցւոյ հնազանդութեան խոստումը, որ սովորոյթը մտած էր Պանդուխտ եղբայրներէն իբրեւ հաւատոյ երաշխաւորութիւն»[16]:

Հայ միաբանող եղբայրների կարգը չպետք է նույնացնել նաև դոմինիկյան միաբանության ներսում 1300-1304 թթ. ձևավորված «Շրջող եղբայրներ» միաբանության հետ, որի կանոնադրությունը հաստատվել էր 1312 թվականին:

Երկու եկեղեցիների միավորման համար «Միաբանող եղբայրները» առաջարկում էին վերակառուցել հայոց եկեղեցական միջավայրը, ուստի պատահական չէ, որ «Շրջաբերական թղթում» հայոց եկեղեցուն ներկայացվում

---

[14] Նույն տեղում, էջ 520:
[15] Նույն տեղում, էջ 521:
[16] Ի. Սրապեան, Հայք եւ ունիթորք, «Հանդէս ամսօրեայ», 1909, N 11, էջ 323-324:

է ԺԹ «մոլորություններ»: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի դավանաբանական և կազմակերպական, որոնցից առավել կարևորը վերջինին վերաբերող է և ԺԴ կետերն են: Խոսելով հայոց եկեղեցու կազմակերպման մասին Հովհ. Քռնեցին գրում է «Հնազանդին երկուց պատրիարգաց, որոց իւրաքանչիւր ստորագրէ զինքն գոլ պատրիարգ ամենայն հայոց...»[17]: Պատրիարքներից մեկը Սսի հայոց կաթողիկոսն էր, իսկ մյուսը Աղվանքի կամ Աղթամարի կաթողիկոսը: Ե կետը հայոց եկեղեցու դիրքորոշումն էր պապականության գերագահության նկատմամբ. «Հռովմայ եկեղեցին ոչ գոլ գլուխ ամենայն այլոց եկեղեցեացն աշխարհի...»[18]:

Այժմ փորձենք պարզել միաբանության հաստատման ժամանակը: Խոսելով այս մասին, Գր. Պետրովիչը գրում է. «Այս նոր կրօնաւորական կարգը, ըստ Չամչեանի, հաստատուեցաւ Յովհաննէս ԻԲ. քահանայապետէն 1334-ին, իսկ ըստ Հ.Վ.Դ. Աուդէնրայնի 1331-ին»[19]: Մեր կարծիքով, վերոհիշյալ թվականներին միաբանությունը ստացել է գործունեության թույլտվություն, քանզի 1337-1344 թթ. ընթացքում դեռևս յուրացվում էին դոմինիկյան կարգի ծեսերը և կանոնները: Հարցադրման պատասխանը պարզաբանելու համար դիմենք երկու տեղեկության: Հովհ. Քռնեցին «Շրջաբերական թղթում» գրում է. «Եւ քանզի կարգս մեր հաստատեալ եղև մանաւանդ սակս միաբանութեան ընդ սրբոյ եկեղեցւոյն Հռովմայ ուստի և զանունն ընկալաւ և ասի կարգ միաբանողաց...»[20]:

1356թ. արծանագրված հիշատակարանում կարդում ենք. «Զքարգմանօղ սոյն գրոցս ի լատին լեզուէ ի հայս գՖրայ Թումայն ճահկեցի ի կարգէ միաբանողացն, որ մինչդեռ ծաղկէրն երիտասարդական տիօք լի ամենայն իմաստութեամբ և շնորհօք, թարգմանեաց զգիրքս զայս ի քաղաքն Կաֆայ: Եւ ապա, ընդ երիցագոյն հարազատ եղբօր իւրոյ Աւաքտէրամբ, շարժեալ նախանձով բարեաց, դիմեցին յաթոռն Հռոմայ, առ... պապն Զ. երրորդ Ինննոցէնցիոս, վասն հաստատութեան սուրբ կարգին միաբանողաց...»[21]:

Համադրելով այս տեղեկությունները կարելի է եզրակացնել.

ա) Պապական արքունիքում գտնվելու ժամանակ Հովհ. Քռնեցին իրավունք է ստանում ստեղծել միաբանություն, որը պետք է զբաղվեր քարոզչական գործունեությամբ, ուստի 1330-40-ական թվականները կարելի է համարել նրա ձևավորման շրջան: Այն կոչվում էր Հայ միաբանող եղբայրներ (Unitores):

բ) Իր վերջնական տեսքով միաբանությունը հաստատվեց 1356 թ. / «Ordo Fratrum Unitorum S. Gregorii Illuminatoris» - Ս.Գրիգոր Լուսավորչի

---

[17] Կղ. Գալանոս, էջ 516:
[18] Նույն տեղում, էջ 515:
[19] Գր. Պետրովիչ, Միաբանող եղբայրները եւ հայ եկեղեցին (1330-1360), «Հանդես ամսօրեայ», 1969, N VII-IX, էջ 368-369:
[20] Կղ. Գալանոս, էջ 522:
[21] Հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 416-417:

միաբանող եղբայրների կարգը) և կազմեց դոմինիկյան միաբանության հայկական ճյուղը:

Այժմ պարզաբանենք այն հարցը, թե միարարական շարժման նկատմամբ ինչ վերաբերմունք ուներ հայոց եկեղեցին, մասնավորապես Սսի կաթողիկոսությունը:

Խոսելով միաբանող եղբայրների գործունեության մասին Մխ. Ապարանեցին գրում է. «Այլ՝ թէպէտ բազումք գաղղք եւ ատելիք գտան, սակայն բազումք ընդ ամենայն աշխարհ ջերմեռանդ միաբանութեամբ եղեն սիրեցեալք ի Տեառնէ, այսինքն ի Սիս եւ ընդ յամենայն երկրի եւ ի Սեբաստիա եւ ի Հռոմոց Տունն, ի յԱռաքելոց երկիրն եւ ի Ղարաքանքն, ի Սալմաստ եւ ի յերկիրն իւր, ի Սօլթանիա եւ ի Մարաղա, ի Թավրէժ եւ ի Նախիջեւանն յերկիրն, այսինքն ի գաւառն եւ ի յերրնջակոյ երկիրն, ի Գողդն եւ ի յԱնապատն եւ ի սահմանս նոցա եւ ի յայլ բազում յընթանուր եւ ի մասնաւոր տեղիս ի Սղսո մինչեւ ի Մեծ Հայք...»[22]:

Պարզ է, որ և միաբանող եղբայրները, և հայոց եկեղեցու ավանդապահ գործիչները պետք է դիմեին Սսի հայոց կաթողիկոսությանը հայ հասարակական – քաղաքական կյանքը ալեկոծող խնդիրների շուրջ պարզաբանումներ ստանալու համար: Հակոբ Սսեցի կաթողիկոսը (1327-1341) կամա թե ակամա պետք է աղերսվեր միարարական շարժման դեպքերին ու իրադարձություններին: Մենք համակարծիք չենք այն հեղինակների հետ, որոնք Հակոբ Սսեցուն ներկայացնում են որպես միարարական շարժման համախոհ ու կողմնակից, հիմք ընդունելով հետևյալ վկայությունը. «...եւ ի կաթուղիկոսութեան Հայոց տեառն Յակոբայ, որ էր յոյժ հնազանդ սուրբ եկեղեցւոյն Հռոմայ եւ հրամանակատար...»[23]: Հիշատակարանի այս հատվածը չի համապատասխանում իրականությանը, քանզի այն արձանագրվել է 1329 թ. և պատկանում է Բարթուղիմեոս Մարաղացու գրչին: Իրականում ժամանակի նշանավոր եկեղեցաքաղաքական գործիչը միանշանակ վերաբերմունք չուներ շարժման նկատմամբ՝ ելնելով հետևյալ հանգամանքներից.

ա) Շարժման նկատմամբ դրական վերաբերմունք ակնկալում էր Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական կյանքը կարգավորող բարձրաստիճան գործիչների մի մասը:

բ) Շարժումը սկզբնավորվել էր Հայաստանում, և կաթողիկոսի համար դժվար էր որոշակի վերահսկողություն սահմանել նրա ընթացքի վրա:

գ) Հակոբ Սսեցու դիրքորոշման վրա չէր կարող ազդեցություն չունենալ այնպիսի գործոն, ինչպիսին միարարների ծավալած մշակութային գործունեությունն էր:

---

[22] M.Oudenrijn, p. 217.
[23] Հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 216:

Միարարների կողմից հայոց եկեղեցուն ներկայացվող «117 մոլորությունների» ցանկում կաթողիկոսը ներկայացված է որպես շարժման հակառակորդ. «Փոքր Հայոց կաթողիկոսի մոտ եկան իրենց ճկրտության և ձեռնադրության վրա կասկածող արքեպիսկոպոսներ, որոնց նա պատվիրեց. ա) Լատինական ծեսով պատարագ չանեք, բ) Պահք ու ծոմ չպահեք լատինական կանոններով, գ) Հայոց մկրտությունը լատինականից լավն է, ուստի կրկնամկրտություն չանեք, դ) Հայերին հռոմեադավան չդարձնեք վկայելով, թե հայադավանը կգնա դժոխք, ե) Երեխաներին լատիներեն լեզու չսովորեցնեք: Երբ կաթողիկոսը ձեռնադրեց վեց եպիսկոպոս, նրանցից ստորագրություն վերցրեց, որ իրենց թեմերում լատիներեն չեն ուսուցանի և կաթոլիկ քարոզիչներ չեն ընդունի, զ) Պապին չպետք է ընդունենք որպես Արևելքի եկեղեցիների գլուխ, քանզի ծովից մինչև Թաթարստան հայոց կաթողիկոսն է եկեղեցու գլուխը»[24]: Եթե ընդունենք, որ «մեղադրանքների» մի մասը չափազանցված է, ապա կաթողիկոսի գահընկեցության պարագան պարզորոշ վկայում է, որ Հակոբ Սսեցին շարժման հակառակորդ էր:

Միարարական շարժումը իր սկզբնավորման պահից չկարողացավ մշակել գործողությունների միասնական ծրագիր, ուստի նրա ներսում ձևավորվեց երկու հոսանք: Առաջինը ներկայացնում էին շարժման հիմնադիրները Հովh. Քռնեցին, Հակոբ Թարգմանը, Մարգարե վարդապետը և նրանց կողմնակիցները: Սրանք այն հայ վարդապետներն էին, որոնք հայ - հռոմեական եկեղեցիների միավորման ընդհանուր քարոզչության ներքո ավելի շատ զբաղվում էին մշակութային գործունեությամբ: Սրանց գործունեությունը հիմնականում ամփոփվում էր վանական դպրոցներում: Սակայն այս կամ այն նկատառումներով շարժմանը հարում էին գործիչներ, որոնք ձեռնամուխ եղան հայոց դավանանքը լատինականով վերակառուցելու գործնական քաղաքականությանը:

*
* *

Ընդհանուր հայտարարի բերելով վերը շարադրվածը կարելի է եզրակացնել, որ ֆրանցիսկյան և դոմինիկյան միաբանությունների քարոզչական գործունեության հետևանքով հայ հասարակական – քաղաքական կյանքում ծնունդ առան նոր երևույթներ ու իրադարձություններ: Հովh. Քռնեցու նախաձեռնությամբ 1330 թ. Քռնայում հրավիրվում է հայ վարդապետների ժողով, որտեղ որոշում են հայոց եկեղեցին միավորել կաթոլիկ եկեղեցու հետ: Այսպես հայ իրականության մեջ ձևավորվում է միարարական շարժումը, որը աշխատում էր վերակառուցել հայ հասարակության հոգևոր – մշակութային կյանքը:

---

[24] I. D. Mansi, Sacrorum conciliorum nova et amplissima collectio, Graz-Austria, 1961, vol. 25, p. 1251-1253.